

երախտեաց Սրբոյն Յօհաննու Մկրտչին եւ Սրբոյն Գրիգորի, զմեզ ի կեանս կոչողին, իբրու կաթիլի մի առնըւիրեսցուք: Որոց գրաւեալ եմք ի ծառայութիւն, անդստին ի մանկութենէ անտի, եւ տեսեալ եմք բազում անգամ պանչելիս Հիանալիս ի որբութենէ նոցին եւ երախտիս անմբաւս, զորս տեսաք եւ տեսանելոց եմք եւս՝ ըստ անկասելի յուսոյն մերոյ:

Արդ՝ որք ընթերցեալ զսա օգտիջիք ինչ ի սմանէ, յիշեսջիք ի Տէր, զՎեհափառ, զարբասէր եւ զբազմարդիւն առաքելաշնորհ քարոզն վերոյիշեցեալ զՎարժապետն մեր եւ զուսուցիչ եւ զհայրըն իսկ մերս անուցման ըստ հոգւոյ, զՏէր Վարդապետն տիեզերալուր վարդապետն, եւ զմեզ, զնորին ձեռնասուն սրգիքս՝ հանդերձ ծնողիւք մերովք:¹

Հուսկ յետոյ քան զամենայն՝ զերկոսին որդիական մեր, զՏէր Թովմասն եւ զՏէր Երեմիայն,² որք դեզերին միշտ ի գրունս ընթերցմանց Աստուածաշունչ տառից: Եւ որք յիշեքդ՝ լինիք յիշեցեալք ի Քրիստոսէ Յիսուսէ, յուսոյն մերմէ՝ յաւուրն սյցելութեան՝ հանդերձ ննջեցելովք ձերովք: Ամէն:

պէս «լումայիկ» մը նուիրած կ'ըլլան Մշու Մեծ ուխտատեղւոյն, այլ նաեւ շատ հաւանական է որ Զենոբի նիւթական արդիւնքն ալ նուիրած ըլլան Ս. Կարապետին «իբրու կաթիլի մի»:

1 Օրհնեալ ձեր ալ եւ ձեր վարդապետին ալ յիշատակները: Տայր երկինք որ ձեր գործունէութեան եւ սրտակցութեան ոգին ալ յիշատակ մ'ըլլար անոնց, որ սքեմը կը կրեն:

2 Թովմաս կամ Թումա եւ Երեմիա, Կոլոսի առաջին աշակերտները (տես վերագոյն. էջ 70):